



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՆՔԸ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ  
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 6-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

(Երևան, 4 հոկտեմբերի, 2012 թ.)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում «Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ» լրագրողների համահայկական 6-րդ համաժողովի մասնակիցների:

Գոհությամբ ենք նատուցում Բարձրալին, որ տարեցտարի համազգային հավաքներն ու ծրագրերը Հայրենքում համախմբում են տարբեր մասնագիտություններ ունեցող մեր ժողովրդի զավակներին. Այսօր Հայաստանի և Սփյուռքի լրատվամիջոցների ներկայացուցիչներով համախմբվել եք՝ համատեղ քննարկելու և միասնական գործակցությամբ ուղենշելու այն ճանապարհները, որոնցով առավել պիտի արդյունավորենք ձեր առաքելությունը և ձեր ներդրումը բերեք Հայոց Ցեղասպանության տարելիցի ոգեկոչմանը:

Հայոց Ցեղասպանության 100-ամյակի նախաշեմին մեր ժողովրդի համար մխիթարական է, որ ազգային վշտի ու արդարության պահանջի մեջ աշխարհասփյուռ հայությունն այլևս միայնակ չէ, և շատ ազգեր ու պետություններ, մեր քույր եկեղեցիները մեզ հետ միասին դատապարտում են մեր ժողովրդի դեմ իրականացված ոճրագործությունը՝ իբրև հանցանք մարդկության դեմ. Անտարակույս է, որ մեր արդար դատի պաշտպանության և դեպի հաղթանակ առաջնորդելու գործում առանձնակի դերակատարություն ունի տեղեկատվական-քարոզչական աշխատանքը, որը դուք իրականացնում եք տարբեր երկրներում՝ հանրությանը Վատուցելով ճշմարտությունը: Մեր օրերում, երբ դեռ տեղ են գտնում խտրականության, ազգային և կրոնական ատելության, օրինազանցության այնպիսի օրինակներ, ինչպես Ռամիլ Սաֆարովին ազատ արձակելն ու հերոսացնելն էր, լրատվամիջոցների դերն է զգոն պահել հասարակական մտածողությունը, անբողջ գործությամբ հնչեցնել հարցը, թե ի՞նչ արժեքներով է պատրաստվում ապրել մարդկությունը 21-րդ դարում, եթե պատրաստ չէ վերանայել անցյալում տեղ գտած անարդարություններն ու իրավունքի ոտնահարման իրողությունները: 100-ամյա տարելիցին ընդառաջ՝ կսրևոր է նաև արժևորումը այն ուղու, որը մեր ժողովուրդը առ Ստավաժ ապավինությամբ անցել է՝ մաքառումով, հերոսական ջանքերով